

# ՊԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

## ՅՈՒ. Վ. ՂՈՒԼՅԱՆ

1918-1920 թթ. Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների հարցի ուսումնասիրման, վերլուծման ու գիտական ընդհանրացման նշանակությունն ու անհրաժեշտությունն ակնհայտ է: Խնդրի արդիականությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ Անդրկովկասում պետական-քաղաքական հարաբերությունների կարգավորումը միշտ հարուստ է եղել վիճահարույց, ազգամիջյան հակամարտությունների և տարածքային չլուծված հարցերով, այլև Հայաստանի առաջին հանրապետության շրջանում հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմությունը գիտականորեն ու ամբողջական ներկայացնելու անհրաժեշտությամբ: Այն կարևոր է զարգացման արդի փուլում Հայաստանի ու Ադրբեջանի անկախ հանրապետությունների առկայության, նրանց միջև Ղարաբաղի հարցի շուրջ ընթացող բանակցությունների, տարածաշրջանային հարաբերությունների տեսանկյունից:

Իրենց անկախության առաջին ամիսներից Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա հակասություններն ու տարածայնությունները պայմանավորված էին մասնավորապես տարածքային խնդիրներով: Այդ լարված փոխհարաբերություններն առաջին հերթին հետևանք էին Ադրբեջանի կողմից տարածքային անհիմն պահանջների: Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նախիջևանը, Օարուրը, Վեդիբասարի և Ջանգիբասարի շրջանները, Սուրմալուի գավառը, Բասարգեչարի շրջանը: Կարսը թուրքերին չանցնելու դեպքում՝ հավակնում էին նաև վերջինս մինչև Բաթում: Փաստորեն Ադրբեջանն իր տարածքը ձգտում էր ընդլայնել հանիրավի կերպով՝ զուտ հայկական շրջանների հաշվին: Ադրբեջանի նվաճողական քաղաքականության դեմ մղվող պայքարին զուգահեռ՝ Հայաստանը ձգտում էր դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել Բաքվում: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Կարևորագույններից մեկը Ադրբեջանի տարբեր շրջաններում (Բաքու, Գանձակ, Նուխի, Արեշ, Օսմիսոթր և այլն) հայ բնակչության շահերի պաշտպանությունն էր: Մյուս կողմից՝ Հայաստանը, զուրկ լինելով նավթի պաշարներից, կարևորում էր դրա ներմուծումը Բաքվից: Իսկ նավթի նշանակությունն անգնահատելի էր, քանզի երկաթգծի ողջ աշխատանքը կախված էր դրանից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ շատ ամիսներ պահանջվեցին, մինչև հնարավոր եղավ դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել: Մինչ այդ տեղի հայության ղեկավարումն ու նրա խնդիրների լուծումը իրականացնում էր Բաքվի Հայոց ազգային խորհուրդը: Այն՝ որպես հասարակական կազմակերպություն, ստեղծվել էր 1918 թվականին: Այս մարմինը մեծ աշխատանք կատարեց հատկապես հայ գաղթականների տեղավորման, նրանց նյութական, բժշկական օգնություն կազմակերպելու գործում: Բաքվի Ազգային խորհրդի միջոցով էր իրականացվում նաև Հայաստան ուղարկվող ապրանքների, առաջին հերթին նավթի առաքումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ադրբեջանում իր դիվանագիտական ներկայացուցչի ցանկանում էր նշանակել Թիֆլիսի քաղաքական շրջանակներում մեծ ճանաչում և հեղինակություն վայելող Տիգրան Բեկադյանին, որը տվել էր

<sup>1</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղասփոխականի մը յիշատակները, Բ. է, Եր., 1990, էջ 183:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, թ. 21:

իր համաձայնությունը<sup>1</sup>: Արդեն 1918 թվականի սեպտեմբերի սկզբին Հայաստանի կառավարությունը Երևանում համապատասխան հրահանգներ ստանալուց հետո պատրաստվում էր Բաքու ուղարկել նրան: Տ. Բեկզադյանի նշանակումը ընդունվել էր Աղդրբեջանի իշխանությունների կողմից<sup>2</sup>: Գանձակում գտնվող Մ. Հարությունյանը և Մ. Արզումանյանը 1918 թ. սեպտեմբերի 23-ին Աղդրբեջանի վարչապետ Խան-Խոյսկուն հարցում կատարեցին: Վերջինս պատասխանեց, որ Աղդրբեջանի կառավարությունը Տ. Բեկզադյանի նշանակմանը չի առարկում, և այդ առթիվ արդեն տեղեկացրել է Թիֆլիսում իրենց ներկայացուցիչ Ջաֆարովին<sup>3</sup>:

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը ևս Հայաստանի արտաքին գործերի մինիստրին տեղեկացրեց Տ. Բեկզադյանի անձի վերաբերյալ Աղդրբեջանի կառավարության համաձայնության մասին: Այդ առնչությամբ նրանք պաշտոնապես հայտնեցին Հայաստանի կառավարությանը Ազգային խորհրդի խնդրանքը՝ արագացնել Տ. Բեկզադյանի ճանապարհումը Բաքու<sup>4</sup>: Ինչ վերաբերում է կառավարությանը, ապա նա, 1918 թ. հոկտեմբերի 11-ի նիստում քննելով Աղդրբեջանում դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու մասին արտագործնախարարի առաջարկած օրինագիծը, որոշեց ընդունել այն և ներկայացնել Հայաստանի խորհրդի հաստատմանը, որն էլ կատարվեց հոկտեմբերի 15-ին<sup>5</sup>: Այդ որոշումից հետո Հայաստանի վարչապետ Հ. Քաջազունին Աղդրբեջանի Ա. Գ. Ն-ին հոկտեմբերի 17-ին հղած ուղերձում հայտնում էր, որ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նպատակով Բաքվում դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվել Տ. Բեկզադյանը, որը իրավասու է բանակցություններ վարել ինչպես քաղաքական-տնտեսական, այնպես էլ ընթացիկ հարցերի վերաբերյալ<sup>6</sup>: Թվում էր, թե ամեն ինչ արդեն լուծված է, և Տ. Բեկզադյանը պետք է անցնի իր պարտականությունների կատարմանը: Բայց նրա Բաքու մեկնելը հետաձգվում էր, քանի որ Աղդրբեջանական կողմը նման հնարավորություն չէր ընձեռում: Հետագայում պարզվեց, որ Աղդրբեջանի կառավարությունը կտրուկ հրաժարվել էր իր իսկ տված համաձայնությունից: Քանի որ Տ. Բեկզադյանի մեկնումը հետաձգվել էր, Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Ա. Ջամալյանը հետագրեց Աղդրբեջանի վարչապետ Խան-Խոյսկուն՝ հետաձգման պատճառներն իմանալու<sup>7</sup>: Պատասխանը շատ չուշացավ: Աղդրբեջանի կառավարությունը, Տ. Բեկզադյանին համարելով իրենց համար «անցանկալի»<sup>8</sup>, հրաժարվում էր նրան ընդունելուց:

Ուշագրավ է այդ առթիվ Թիֆլիսում Աղդրբեջանի ներկայացուցիչ Ջաֆարովի՝ Ջամալյանին տված հետևյալ բացատրությունը. «Աղդրբեջանի կառավարությունը չի հաստատել Բեկզադյանի թեկնածությունը, որովհետև նրան համարում է աչքի ընկնող դաշնակցականներից մեկը»<sup>9</sup>: Այստեղ ավելորդ չենք համարում հիշատակել, որ Տ. Բեկզադյանը դաշնակցական չի եղել և ավելի շատ հայտնի էր որպես չեզոք գործիչ: Պարզապես Աղդրբեջանական իշխանությունների համար հայ ազգային գործիչները, որպես կանոն, աղերսվում էին ՀՅԴ անվան հետ: Ջաֆարովի հավաստմամբ՝ Աղդրբեջանի համար ընդունելի էին Ս. Հարությունյանի, Լ. Եվանգուլյանի կամ Մ. Պապաջանյանի թեկնածությունները: Սակայն Ջամալյանն, իրավացիորեն առարկելով, շեշտում էր, որ դիվանագիտական պրակտիկայում ընդունված չէ կառավարության նախագահի մակարդակով նախնական համաձայնություն տալուց հետո դրանից հրաժարվելը: Ջամալյանի համոզմամբ՝ Աղդրբեջանի մերժման պատճառը «իր կեղտոտ գործերը թաքցնելու» ցանկությունն էր<sup>10</sup>: «Կեղտոտ գործեր» ասելով Ջամալյանը նկատի ուներ Աղդրբեջա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, «Հորիզոն», Թիֆլիս, 24 սեպտեմբերի, 1918:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 51, 77, 139, թ. 2, 7, 26:

<sup>5</sup> Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1991, թ. 3, էջ 52:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 4, 13:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 13, 15, 4:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 276, ց. 1, գ. 10, թ. 29, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 7:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 18:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

նում և Բաքվում հայերի կոտորածների փաստը: Այդ պարագան նկատի ունեն Բաքվում հայոց առաջնորդ Բագրատ եպիսկոպոսը, երբ Ջամալյանին խնդրում էր արագացնել Բեկզադյանի ուղարկումը, քանզի հայերի նկատմամբ կիրառվող բռնությունները շարունակվում էին<sup>13</sup>: Սակայն ստեղծված նման իրավիճակում Տ. Բեկզադյանը ՀՀ վարչապետին ներկայացրած զեկույցով խնդրում էր իրեն ազատել հիշյալ պաշտոնից, քանզի Ադրբեջանը հրաժարվել էր ճանաչել իր թեկնածությունը<sup>14</sup>: Այդ առնչությամբ Հ. Քաջագունին Ա. Ջամալյանին հայտնում էր, որ այդ մերժումը ՀՀ կառավարությանը դրել էր ծանր կացության մեջ: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ նա պարտավորված էր համարում բողոքել Ադրբեջանի նման վարմունքի դեմ, որովհետև մերժումը չի նպաստում երկու երկրների միջև բարիդրացիական կապերի ամրապնդմանը<sup>15</sup>: Հայ հասարակական կարծիքը մեծ փողովմունքով ընդունեց Տ. Բեկզադյանի մերժման փաստը: Վերլուծելով մերժման պատճառները՝ Գրանք Գշում էին, որ Խան-խոյսկու կառավարությանը ձեռնառու չէր իր ոճրագործ արարքները դիտող և հսկող աչքի գոյությունը<sup>16</sup>, քանզի այդ ժամանակ Ադրբեջանի հայերի նկատմամբ տարվում էր ցեղասպանության քաղաքականություն: Մյուս կողմից Տ. Բեկզադյանին բնութագրում էին որպես ոչ մի քաղաքական հոսանքի չպատկանող, շիտակ, կարող և անջախասեր անձնավորություն, որը վալելում է ժողովրդի լայն խավերի հարգանքն ու վստահությունը:

Եվս մի քանի ամիս պահանջվեց, մինչև Հայաստանն իր ներկայացուցիչն ունեցավ Ադրբեջանում: Վճռորոշ նշանակություն ունեցավ 1918 թվականի Ռկոտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարը, որով Անդրկովկասից պետք է հեռանային թուրքական զորքերը: Դրությամբ նման կտրուկ փոփոխությունից հետո Ադրբեջանն ինքն էր ձգտում Երևանում դիվանագիտական ներկայացուցչություն հաստատել: Արտգործնախարար դարձած Ջաֆարովը Թիֆլիսում Ադրբեջանի նոր ներկայացուցչի միջոցով ՀՀ արտգործնախարարին հղած ուղերձում խնդրում էր պատասխանել, թե հայկական կողմը վերջինիս կողքին ում կցանկանար Երևանում տեսնել Ադրբեջանի ներկայացուցիչ՝ առաջարկելով երեք թեկնածություն<sup>17</sup>:

Ադրբեջանի կողմից Տ. Բեկզադյանի թեկնածության մերժումը Հայաստանի կառավարությանը կանգնեցրեց ծանր դրության առջև, քանի որ Բաքվից օրեցօր նոր անազաններ էին ստացվում հայերի սպանությունների ու հետապնդումների մասին: Այս հանգամանքը նկատի ունեն Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը, երբ արտգործնախարարին առաջարկում էր հետևյալը. «Կարելի է, ինչքան էլ մենք չենք ուզում, մի նոր մարդ նշանակել Բաքվի համար»<sup>18</sup>: Առաջադրվեց Արշակ Մալխասյանի թեկնածությունը, որին Ադրբեջանը չառարկեց և 1918 թվականի դեկտեմբերի 4-ին տվեց իր համաձայնությունը<sup>19</sup>: Հայտնելով իր կառավարության համաձայնության մասին՝ Վրաստանում Ադրբեջանի ներկայացուցչին փոխարինող Վեքիլովը խնդրում էր հաղորդել Թեքինսկու թեկնածության վերաբերյալ Հայաստանի կարծիքը<sup>20</sup>: Դեռևս 1918 թվականի նոյեմբերի 8-ին ՀՀ արտգործնախարարին հղած ուղերձում ՀՀ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, ներկայացնելով Ջաֆարովի կողմից ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչ առաջադրված երեք թեկնածուներին, որոնց թվում էր նաև Խան-Թեքինսկին, գրում էր, որ, ըստ ունեցած տեղեկությունների, նա անցանկալի թեկնածու է, իսկ վերջինների մասին ոչինչ ասել չի կարող: Միաժամանակ տեղեկացնում էր իշխանական որոշ շրջաններում իշխող այն տրամադրության մասին, որ պետք է «ձգձգել մեր պատասխանը ճիշտ այնպես, ինչպես Ադրբեջանն էր ձգձգում, ի պատասխան այն վարմունքի, որ Ադրբեջանը ցույց տվեց պ. Բեկզադյանի խնդրում»<sup>21</sup>:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 24, թ. 25:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 26:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 73, «Հորիզոն», 18 դեկտեմբերի, 1918:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 33, ց. 2, գ. 25, թ. 2:

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 2, գ. 25, թ. 27:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 37:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>21</sup> Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 33, ց. 2, գ. 25, թթ. 1-2, նաև գ. 18, թ. 5:

ՀՀ կառավարությունը հենց այդպես էլ վարվեց՝ մերժելով երեքի թեկնածությունն էլ<sup>22</sup>։

Հայ հասարակական շրջաններում տիրում էր մահ և այն մտայնությունը, որ դաշնակիցների ներկայության պարագայում արդեն կարելի է ու պետք է հաշվի չառնել Ադրբեջանի իրավական գոյությունը։ «Քանի որ դաշնակիցների գորակայաններից մեկն էլ հաքուն պիտի լինի, ապա հայ ժողովուրդը, որպես դաշնակիցներից պաշտոնապես ճանաչված իրավագոր ու դաշնակից մարմին, կարող է ու պետք է այդ կայանին կից իր ներկայացուցիչ ունենա, որին Ադրբեջանը փաստորեն հաշվի չառնել անկարող պիտի լինի»<sup>23</sup>, - գրված էր «Հորիզոն»-ի 1918 թ. դեկտեմբերի 18-ի խմբագրականում։

Արդեն 1918 թվականի վերջին 1919 թվականի սկզբին երկու պետություններն էլ այն կարծիքին էին, որ ժամանակն է միմյանց միջև դիվանագիտական կապեր հաստատել։ Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցչություն հաստատելու հարցը քրե-նարկվեց կառավարության 1919 թվականի հունվարի 8-ի նիստում։ Լսելով արտգործ-նախարարին փոխարինողի բացատրությունը այն մասին, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև դիվանագիտական հարաբերություններ գոյություն չունեն, որոշեց հանձնարարել արտաքին գործերի նախարարությանը՝ կառավարությանը ներկայացնելու երկու հանրապետություններում դիվանագիտական ներկայացուցիչներ հաստատելու մասին զեկուցում<sup>24</sup>։ Այն լավեց կառավարության հունվարի 18-ի նիստում և որոշվեց հանձնարարել արտաքին գործերի նախարարին Ադրբեջանի հետ հարաբերության մեջ մտնել՝ դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակելու համար<sup>25</sup>։ Ադրբեջանում նույնպես օրակարգ մտցվեց երկու հանրապետությունների միջև դիվանագիտական կապեր հաստատելու հարցը։ Արդեն 1919 թվականի հունվարի սկզբին Ադրբեջանի պառլամենտում մուսուլմանական սոցիալիստական բլոկը և Հումմեթ կուսակցությունը համատեղ հռչակագիր ընդունեցին, որտեղ մշտնապես վիճելի տարածքային հարցերը միայն բանակցություններով միջոցով լուծելու անհրաժեշտությունը՝ կառավարությունից պահանջեցին ՀՀ-ի հետ հաստատել դիվանագիտական հարաբերություններ։ Հռչակագրում ասվում էր. «Մենք ունենք չլուծված տարածքային հարց, որ զենքի ուժով չի կարելի լուծել։ Այդ պատճառով մենք մեկընդմիջ տ պետք է հրաժարվենք վիճելի հարցերը զենքի ուժով լուծելուց, պետք է ջանալ այդ բանին հասնել բանակցությունների միջոցով»<sup>26</sup>։

Այն, որ հայտարարությունը անկեղծ չէր, ապացուցվեց մի քանի օր հետո, երբ 1919 թվականի հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարությունը խորրով Բեկ Սուլթանովին նշանակեց Օուշիի, Ջանգեզուրի, Ջեբրայիլի, Ջիվանջիլի գավառների գեներալ-նահանգապետ<sup>27</sup>։ Դրանով իսկ Ադրբեջանի կառավարությունը ձեռնամուխ եղավ Ղարաբաղի նվաճման իր ծրագրի իրագործմանը՝ աջակից ունենալով անգլիացիներին։ Վերոհիշյալ ուժերը նույն հարցադրումով հանդես եկան մահ պառլամենտի հունվարի 28-ի նիստում՝ այս անգամ արդեն դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորելով Հայաստանի մահմեդականների հետ կապի ստեղծման անհրաժեշտությամբ<sup>28</sup>։

Ադրբեջանի գործելակերպում մեծանշան փոփոխությունը Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությամբ չէր պայմանավորված, այլ ավելի շատ Հայաստանի ներսում անկախ մահմեդական միավորումներ կազմակերպելու և դրանք Հայաստանի դեմ դուրս բերելու ձգտմամբ։ Սրա ապացույցը հետագայում ՀՀ-ում կազմակերպված խոսքություններն ու ապստամբություններն էին։

Իհարկե, Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունն աննկատ չէր մնում ՀՀ իշխանությունների կողմից։ Նրա նկատմամբ ՀՀ մշակվող քա-

<sup>22</sup> Տե՛ս "Закавказское слово", Тифлис, 6 февраля, 1919:

<sup>23</sup> «Հորիզոն», 18 դեկտեմբերի, 1918:

<sup>24</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100, թ. 5:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 14:

<sup>26</sup> «Ջանգ», եր., 10 հունվարի 1919:

<sup>27</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1:

<sup>28</sup> Տե՛ս "Закавказское слово", Тифлис, 6 февраля, 1919.

դաքականությունը, ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի, հանգում էր հետևյալին. «Սուտ հիմար ձևանալ Ադրբեջանի և նրա ձեռնարկների հանդեպ. նրա հետ պահել բարեկամական հարաբերություններ, գոնե ըստ ձևի, և ուղարկելով ներկայացուցիչ Մ. Հարությունյանին, ջանալ համաձայնության գալ, եթե ոչ քաղաքական՝ գոնե տնտեսական հարցերի շուրջը»<sup>20</sup>:

«Սուտ հիմար ձևանալ Ադրբեջանի և նրա ձեռնարկների հանդեպ» ստելով՝ Ռուբեն Տեր-Մինասյանը նկատի ուներ այն, որ ՀՀ կառավարությունը այդ ընթացքում մտադիր էր ուժեղացնել պետությունն ու բանակը, տնտեսության վիճակն ու հաղորդակցությունը, որից հետո ներքին ու արտաքին նպաստավոր պայմաններ ստեղծվելու դեպքում ձեռնամուխ լինել «երկրի ներսում իրական Հայաստան ստեղծելուն»՝ նրան միացնելով Ջանգեզուրն ու Ղարաբաղը: Նախատեսվում էր դրան հասնել, նախապես փոքր ձեռնարկների միջոցով, որը հետագայում պետք է էլ ավելի մեծացվեր»<sup>21</sup>:

Ադրբեջանի կողմից Արշակ Մալխասյանի թեկնածության ընդունումից հետո Հայաստանի կառավարությունը որոշ ժամանակ անց փոխեց իր մտադրությունը: Նման եզրակացության համար հիմք ենք ընդունում ՀՀ և Ադրբեջանի արտգործնախարարների գրությունները, չնայած արխիվային փաստաթղթերում հնարավոր չեղավ պարզել, թե ինչու Արշակ Մալխասյանի թեկնածությունը հանվեց և նորից դրվեց Տ. Բեկզադյանի թեկնածությունը, ավելին՝ Ա. Մալխասյանից հետո հավանական թեկնածուներ էին համարվում Պարոնյանը, Թադիանոսյանը և Դաստակյանը<sup>22</sup>: Փաստ է, որ Հայաստանի կառավարությունը նորից դրեց Տ. Բեկզադյանի թեկնածությունը: Ենթադրում ենք, որ երկու հանրապետությունները գնացին փոխզիջման: Հայաստանը, որը Թեքինսկուն համարում էր անցանկալի, ընդունեց նրա թեկնածությունը և իր կողմից նորից առաջադրեց Տ. Բեկզադյանի թեկնածությունը: 1919 թվականի հունվարի 10-ին Ադրբեջանի արտգործնախարարությանը տեղեկացվեց ՀՀ համաձայնությունը այն մասին, որ ՀՀ-ը ընդունում է Խան-Թեքինսկու թեկնածությունը<sup>23</sup>: Տեղեկացվեց նաև, որ շուտով Հայաստանն իր հերթին կհայտնի այն մարդկանց անունները, որոնք կլինեն դիվանագիտական ներկայացուցիչներ<sup>24</sup>: 1919 թվականի փետրվարի երկրորդ կեսին Թիֆլիս ժամանած Աբրահամ Դաստակյանը, որն Ադրբեջանի կառավարության մեջ զբաղեցնում էր աշխատանքի նախարարի պաշտոնը, հայտնեց, որ Ադրբեջանի կառավարությունը համաձայն է Տ. Բեկզադյանին ընդունել որպես ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, և տեղեկացրեց, որ Բաքվի Հայոց ազգային խորհուրդը միաձայն որոշում է կայացրել և խնդրել Բեկզադյանին ընդունել այդ պաշտոնը<sup>25</sup>: Դաստակյանը Թիֆլիս էր ժամանել հատուկ նպատակով՝ ստանալու նրա և Թիֆլիսում գտնվող Հայաստանի ներկայացուցիչների համաձայնությունը: 1919 թվականի փետրվարի 2-ին Ադրբեջանի կառավարությունը ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Մահմեդ Խան-Թեքինսկուն: Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը, ստանալով Ա. Դաստակյանի հեռագիրը այն մասին, որ Ադրբեջանն արդեն իր համաձայնությունը տվել է Բեկզադյանի թեկնածության վերաբերյալ, ՀՀ կառավարությանն արագացնում էր Տ. Բեկզադյանի Բաքու մեկնելը<sup>26</sup>: 1919 թվականի մարտի 11-ին նա հասավ Բաքու: Նրան դիմավորելու էին եկել Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները<sup>27</sup>: Ադրբեջանի կողմից պաշտոնական դիմավորողներ չկային: Նույն ամսի 14-ին Երևան ժամանեց Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին<sup>28</sup>: Երկարատև ձգձգ-

<sup>20</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 246:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 246-247:

<sup>22</sup> Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1991, թիվ 3, էջ 98:

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 139, թ. 49:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 39:

<sup>25</sup> Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1991, թիվ 3, էջ 96:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 102:

<sup>27</sup> Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 192, թ. 29, «Ջանգ», Եր., 21 մարտի, 1919:

<sup>28</sup> Տե՛ս «Ջանգ», Եր., 14 մարտի, 1919, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Եր., 1993, էջ 309:

գումից Յետո 1919 թվականի մարտի կեսերից Կաշտոնական տեղը ստացան դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև<sup>38</sup>:

**Ю. В. ГУЛЯН - Установление дипломатических отношений между Республиками Армения и Азербайджан.** - Дипломатические отношения между независимыми Республиками Армения и Азербайджан долгое время отсутствовали. Основной причиной тому были территориальные споры. Попытки Республики Армения установить дипломатические отношения с Республикой Азербайджан проваливались, встречая сопротивление со стороны Республики Азербайджан. И только после долгих дипломатических переговоров в марте 1919 года между сторонами были установлены дипломатические отношения.